



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-1-Ե-1
2015թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.

նախագահությամբ՝ Ն.Նարիմանյանի,

*մասնակցությամբ՝ ԱԽ անդամներ՝ Լ.Ասրյանի, Մ.Ավանեսյանի, Գ.Գրիգորյանի,
Ա.Լազարյանի, Հ.Խաչատրյանի, Կ. Սադյանի,
Մ. Սաֆարյանի, Մ.Ստեփանյանի,*

քարտուղարությամբ՝ Ս.Ավետիսյանի,

2015 թվականի մարտի 20-ին Ստեփանակերտ քաղաքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նստավայրում, դռնփակ նիստում, քննության առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի ներկայացրած թեկնածությունը և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 116-րդ հոդվածի 2-րդ կետով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով և 92-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար Հասմիկ Արտյուշայի Հարությունյանի թեկնածությանը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին առաջարկել Հասմիկ Արտյուշայի Հարությունյանի թեկնածությունը:

ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ